

ԱՆՏԻՊ ՄԻ ՏԱՂ

ՆԵՐԱՆՈՒՄ

1946 թուին, Սպահանի Չարմաշալ գետի հայաբնակ Լիւստեան գիւղում, փոշիների տակից յայտնաբերեցինք մի ձեռագիր տաղարան: Դա կաշեկազմ, 150 դեղնած ու մզլած թերթերից բաղկացած մի մատեն է, որի 60-80-րդ էջերը զարդարում են 1605 թուականի Շահ Աբբաս Մեծի հրամանով Հայ բնակչության բռնի տեղահանութեան եւ յուզիչ գաղթի զարմուծները պատկերող մի անտիպ տաղ եւ այլ բազմազան ու գունազեղ բովանդակութեամբ ոտանաւորներ, որոնք մինչեւ օրս մոռուլում լոյս չեն տեսել եւ մնացել են անյայտութեան մէջ: Դրանցից յատուկ ուշադրութեան արժանի է «Տաղ 1605 թուականի Հայ բնակչութեան բռնի տեղահանութեան եւ գաղթի» խորագրով ընդարձակ ոտանաւորը, որ պատկերում է 17-րդ դարում Արեւելեան Հայաստանում ապրող Հայ տղովորդի ողբերգական կեանքի պատմութիւնը: Այդ տեսակէտից էլ տաղը հասարակական եւ պատմական տառածին նշանակութիւն ունի:

ԺԱՄԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՏԻՊԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ

Դա այն պատմաւրբանն է, երբ 17-րդ դարի սկզբում Թուրքիայի եւ Սեֆեւեան պետութեան միջեւ պատերազմական գործողութիւնները հեղաշրջում են եւ շարունակուում մինչեւ 17-րդ դարի կէսերը: Թուրք-Պարսկական երկարատեւ եւ աւերիչ պատերազմների ծանր ու մռայլ շրջանում ռազմական յարձակումների գլխաւոր թատերաբեմ է դառնում Հայաստանը եւ տնօրէն ենթարկւում է ամայացման: Ցախ տուն գազալիար թալու համար գծենք միայն մի պատկեր, որ Թուրք փաշաների ստեղծարձակ քոնուսթիւններով բերդում են Թուրքիայի լծի տակ ընկած նոր երկիրները՝ Վրաստանը, Աբքերջանն ու Արեւելեան

Հայաստանը եւ մօտ հարեւր հազար Հայ դերիներ են վաճառում:

Այդ մռայլ շրջանում ծանր հարուած են ստանում Արարատեան գաղտի եւ Երեւան քաղաքի Հայ բնակիչները: Դեռ 1603 թուին, Իրանի Շահ Աբբաս արքան մեծ բանակով Սպահան մայրաքաղաքից շարժւում է դէպի Հիւսիս եւ մտնում Թաւրիզ, ապա անցնում է Արաքս գետը եւ զբաւում Հին-Ջուղան, Նախիջեւանը եւ պաշարում Երեւանը, իսկ Թրքական բանակի գլխաւոր ուժերն ամրաշարժ երեւա՜ր բերդում, ուժեղ դիմադրութեամբ պատերազմում են Պարսիկների հետ:

Քաղաքական դրութիւնն է՛լ աւելի ծանրանում է, երբ մի տարի անց, 1604 թուին, Թուրքիան Շահ Աբբասի դէմ մի մեծ բանակ է ուղարկում:

Որպէսզի Թուրքական բանակը զրկուի օթեւանից ու պարէնից եւ չկարողանայ պատերազմել, Շահ Աբբասը ծրագրում է լիովին մաշի պարձնել Արեւելեան Հայաստանը, իսկ Իրանի տնտեսական դրութեանը զարկ տալու համար որոշում է աշխատասէր Հայ հողագործներին բնակեցնել Պարսկաստանի գաւառները, միաժամանակ դործունեայ եւ հմուտ առեւտրականներին ու վաճառականներին փոխադրել յաւկապէս Սպահանի մօտ:

1604 թուի Օգոստոսին Շահ Աբբասն իրագործում է իր աւերիչ ծրագիրը, հրամայում է Հայ բնակչութեանը տեղահանել: Հրոսակային խմբեր, Շահի հրամանով, առաջին հերթին գաղթեցնում են Գողթանի հարաւարեւմտեան մասում գտնուող քաղաքամարդ, վաճառաշահ եւ զուտ հայաբնակ Հին-Ջուղայի 3000 տուն ունեցող 15,000 հաքուտ եւ փարթաւ Հայ բնակչութեանը, միաժամանակ հրկիզում են Հիմնայաւտակ են անում պատմական քաղաքը: Այնուհետեւ գաղթեցնում են Երեւանի եւ գիւղական բնակչութեանը, Լոռուց մինչեւ Գողթան:

Շահի զինուորական գնդերը քաղաքների եւ գիւղերի մօտ 350 հազար Հայերին, Նիզապենների, սրբերի եւ մարականների հարուստներով իրենց դարաւոր հողից բռնի գաղթեցնում են դէպի Արաքսի ափը։ Շուտով Շահ Արաքսը լուր է ստանում, որ Օսմանեան բանակը ընտել է Արաքստեան դաշտը։ զինուորական խմբերին հրամայում է դադարակէս բնակչութեանն շտապ անցկացնել Արաքսի միւս ափը։ Ժողովրդից շատերը, գէնքի սպառնալիքի տակ, բռնի եւ հապճեպ, լատտերով ու ձիերով կարողանում են անցնել գետը, իսկ շատերն էլ, գլխաւորապէս չքաւորներն ու խեղճները, զոհ են գնում Արաքսի վարար, յորձանուտ ջրերին։

Ականանեա պատմագիրների վկայութեամբ Շահը յատուկ ուշադրութիւն է դարձնում Ջուղայի Հայութեանը, որի չընորհիւ էլ նրանք քիչ գոհեր են ունենում։ Սակայն գաղթական ժողովուրդը դեռ Թաւրիզի չհասած, սկսում է սաստիկ ձմեռը, միաժամանակ վերջանում պաշարը։ Ժողովրդի գրուկանն աւելի ծանրանում է, երբ 1605 թուին Թուրք-Պարսկական պատերազմը նորից է սկսում։ Սակայն Թաւրիզի մօտ Շահ Արաքսը յաղթում է Թրքական բանակին։ Բայց դեռ պատերազմը չվերջացած սովը սաստիկ աւերներ է գործում։ Ամէն օր ճանապարհին սովից ու տանջանքից հարկաւոր գաղթականներ, մանաւանդ հիւանդներն ու երեխաները, մահանում են։

Մի քանի տասնեակ հազար Հայերին Շահ Արաքսը բնակեցնում է Սպահանում, Շիրազում եւ չրջակայ Փերիա, Զարմաշու եւ այլ գաւառների գիւղերում։ Այսպէս ահա հաստատում է Պարսկաստանի Հայ գաղութը։

ՆՈՐ-ՋՈՒՂԱ ԱՐՈՒԱՐՁԱՆԸ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Գաղթական ժողովրդից Հին-Ջուղայեցիները, Շահ Արաքսի հրամանով, բնակւում են մայրաքաղաք Սպահանի մօտ, ուր կառուցում են մի նոր հայաբնակ քաղաք։ Դա Նոր-Ջուղա արուարձանն է, ուր Հայ խոշուներն ու վաճառականները կազմում են առեւտրական ընկերութիւններ եւ առեւտուր անում Աւստրալոր Ախալի, Հնդկաստանի, Ռուսաստանի եւ Հարաւային եւ Արեւմտեան

Եւրոպայի հետ։ Շուտով Նոր-Ջուղան դառնում է նաեւ մշակութային մի կարեւոր օջախ։ 1639 թուին հիմնւում է մի տպարան, որ առաջինն է ո'չ միայն Իրանում, այլեւ ամբողջ Արեւելքում։ Բացւում են դպրոցներ, կառուցւում են Ս. Ամենափրկչի վանքը եւ մի շարք եկեղեցիներ, որոնց պատերը, ինչպէս նաեւ խոշաների չքեղ տների հիւրասենեակները զարդարւում են նկարներով եւ որմնանկարներով։ Ուշագրաւ է որ 17-րդ դարի կէսերին Նոր-Ջուղայում հռչակ է քստանում նկարչի Մինասը, որ իր վարպետ վրձինի շնորհիւ գտնւում է Շահի պալատական նկարիչը։

ՀԱՅ ՊԱՄԱՅՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՀ ԱՐԲԱՍԻ ԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ

Արեւելեան Հայաստանի Հայ բնակչութեան բռնի տեղահանութեան եւ յուզիչ գաղթի մասին արձանագրել են ականատես պատմիչներ, ողբաոցներ եւ տաղաբաններ։ Դրանցից մեզ հասել է մի Թանկապէն ձեռագիր մատենան, ուր կարդում ենք այսպիսի յուզիչ տողեր. «... Բազմաթիւ խեղճ կանանց ողբը սիրտ էր մաշում... Նրանցից շատերը քաղաքների դռների առջեւ գետին էին ընկնում եւ վերջին անգամ համբուրում հայրենի հողը, իսկ ուրիշներ՝ աղլիկբք, հարսներ, ծեր կանայք լացակումած հրաժեշտ էին ապլիս իրենց բնակարաններին երեսները պատերին քսելով»։

Շահ Արաքսի բռնի տարագրութեան պատկերը գծող ուշագրաւ վաւերագիր է նաեւ մի այլ ժամանակագրութիւն։ Դա 17-րդ դարի նշանաւոր պատմագիր Առաքել Դաւրիթեցու (1615-1669) «Պատմութիւնն է. ուր պայծառ գոյնեքով պատկերանում են 17-րդ դարի առաջին 60 տարիների անցքերի ու դէպքերի պատմութեան էջերը։ Գիրքը ժամանակագրական ընդլս է կրում եւ արժէքավոր, արժանաւաստ եւ շատ հարուստ մի աղբիւր է այն տեսակէտից, որ հաղորդում է մանրամասն կարեւոր տեղեկութիւններ Հայաստանի աւերող Թուրք-Պարսկական պատերազմների, այլեւ Շահ Արաքսի հրամանով Հայերին բռնի կերպով Պարսկաստան գաղթեցնելու, նրա կոտորած աւերածութիւնների եւ Հայ ժողովրդի

մշակութային վերածնունդի մասին։ Պատմութեան մէջ թանկագին նիւթեր կան նաեւ։ Ժամանակի տղիւս ու խաւարամիտ հոգեւորականութեան տիտուր բարքերի մասին, զորս պատմագիրն արձանագրել է խորշ վշտով եւ դառնութեամբ։ Պատմութեան լեզուն թէեւ զրարար է, բայց ոճը պարզ է, սահուն, իսկ նկարագրած տողերը յուզիչ են, պատկերաւոր եւ գրաւիչ։

1605 թուականի յուզիչ դաղթի պատմութիւնն իր արտայայտութիւնը գտել է նաեւ Այդ բանաստեղծութեան գրականութեան մէջ։ Նախ տեսակէտից արժէքաւոր է մի անտիպ ընդարձակ բանաստեղծութիւն։ Դա Հայ բանասիրական գրականութեան դեռ անծանօթ տաղարան, այլոյ, մանրանկարիչ եւ փորագրիչ Դանիէլ Հախնազարեանի «Տաղ 1605 թուականի Հայ քնակութեան պեղանա՛ռ»-ընէն եւ դաղթի խորագրով պատմական-քաղաքական երկարաչափ ոտանաւորն է, որը վկայում է այն մասին, թէ Հայ տաղաբանները չեն երգել միայն իրենց քաղաքական յոյգերն ու հոգեկան ապրումները, այլեւ պատկերել են ժամանակի պատմական նշանակութիւնն ունեցող անցքերն ու ղէպները, եւ արտայայտել են որոշ քաղաքական տրամագրութիւններ։

Բայց առանաւորի կառուցումը պատահականութեան արդիւնք չէ։ Տաղարանը խորացել է Հայութեան սարսափելի տարագրութեան, տեղահանութեան պատմութեան մէջ այն պայծառ դիտակցութեամբ՝ որ Հայ ժողովուրդը, մանաւանդ նոր սերունդը, չբռնանայ իր պատմութիւնը, որի էջերը հերոսական են ու ողբերգական։ Հայոց պատմութեան այդ մոռյալ թուականն էլ պատկերում է Հայ ժողովուրդի մեծութիւնը։ Այդ տաղով երգիչը ձգտել է մի վեհ նպատակի, որ նոր սերունդն ո՛չ միայն լաւ յիշէ իր պատմութիւնը, այլեւ դառնբառնի նրա դաւաւոր փորձից եւ աւանդներից։ Այդ դիտակցութեամբ էլ տաղարանն իր մատենանք գարդարել է պատկերաւոր բանաստեղծութեամբ, որն ուշագրաւ է իր կառուցողական արուեստի որոշ առանձնայատկութիւններով։

Տաղը գրուած է աշխարհաբար եւ որոշ տողերում ժողովրդական պարզ, սահուն լեզուով։ Ճիշդ է, անսանաւորում չէք տես-

նում գործող անձերի ընտրագրութիւնը, բայց դրա փոխարէն մեծ տեղ են գրաւում ղէպների պատկերաւոր նկարագրութիւնները եւ պատմողական մասը։ Տաղարանը կարեւոր տեղեկութիւններ է տալիս Ծաւ Արքայ Մեծի Հայ ժողովուրդին եւ ժամանակի մեկիջներին, քնալանթարներին եւ բարձրաստիճան հոգեւորականներին տուած մեծամեծ խոստումներին եւ խորհուրդներին մասին, միաժամանակ ծանօթացնում է նրանց խորհրդակցութեան ու եղբակացութեան հետ։ Նոյնպէս պատմում է ժողովրդի յուզիչ դաղթի, ահուարսափի, տանջների եւ հրոսակային զինքերի աւերածութիւնների մասին։ Ողբերգական է նաեւ այն որ դաղթից ամենից շատ տուժում են չքաւորներն ու խեղճները։ մի երեւոյթ, որի նկարագրութիւնը չենք կարողում այլ պատմաբանների արձանագրութեանց մէջ։ Տաղարան Դանիէլն առանձին դառնութեամբ նկարագրում է Ծաւի զորքերի գործած վայրագութիւնները եւ Հայ ժողովուրդի տարբեր խաւերի, առանձնապէս չքաւոր գաւաի, կեանքի յուզիչ ապրումները։

Անժխտելի է, որ Դանիէլի տաղի բովանդակութիւնն իր որոշ երանգաւորումներով ու գծերով հետաքրքրական երեւոյթ է նրանով, որ որոշապէս պարզում է եւ արտայայտում Ծաւ Արքայ Մեծի քաղաքական տրամադրութիւնները, նրա խորհուրդների եւ ծրագրի էութիւնը։

Անժխտելի է նաեւ այն, որ Ծաւ Արքայի հրամանով Հայ քնակութեան բռնի տեղահանութեան, աւերածութիւնների, դաղթի եւ ժողովուրդի տարբեր խաւերի ծանր տառապանքների, տանջանքների եւ յուլիչ ապրումների պատմութիւնն ուսումնասիրող պատմաբանների, բանասէրների, գրական ծայկների ու մտաւորականների համար Դանիէլի յանգաւոր նկարագրութիւնը մի կարեւոր փաստական աղբիւր է հանդիսանում։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Փեննի (Իրաք)

(Տար. 1)